ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԴՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 3 1956

Ա. ԱԴԱՄՅԱՆ

ՎՐԱՑ ՀԵՐԱԿԼ Բ. ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՏՊԱԳՐԻՉ ՊՈՂՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամական սերտ հարաբերությունների վերաբերյալ բավականին հարուստ նյութ կա Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի արխիվի բաժնում։ Այդ նյութի մի զգալի մասը մինչև օրս, վրիպելով մասնագետների ուշադրությունից, մնացել է չուսումնասիրված և անտիպ։ Այդպիսիներից մեկն է ահա վրաց Հերակլ Բ. Թագավորի (1744—1798) և տպագրության արհեստի հմուտ մասնագետ վարպետ Պողոս Հովհաննիսյանի (Արապյան, 1742—1835) միջև 1781 թվականին կնքված պայմանագիրը՝ Թբիլիսիի վրացական տպարանը վերակառուցելու և շահագործման հանձնելու մասին[1]։

Ինչպես հայտնի է, 18-րդ դարի 50-ական թվականներից հետո, Հերակլ Բ. Թագավորի տիրապետության տակ գտնված արևելյան Վրաստանում տնտեսությունը, գիտությունը և կուլտուրան ապրեցին վերելքի որոշ շրջան։ Հերակլ Բ. Թագավորը հատուկ ուշադրություն դարձրեց նաև վրացական տպագրության վրա, մեծ ջանք գործադրելով հատկապես Թբիլիսիի հին տպարանը վերակառուցելու և շահագործման հանձնելու ուղղությամբ։

Այդ ժամանակ տպագրության արհեստի մեջ ճանաչված վարպետ էր Պողոս Հովհաննիսյանը, որը Կ. Պոլսում ուներ սեփական տպարան և հրատարակչություն։

Վարպետ Պողոսը հայկական տպագրության գործում բացառիկ դեր է խաղացել։ Նրա պապը, հայրը, եղբայրները, որդիները և ազգականներից ոմանք նույնպես զբաղվել են հայ տպագրության գործով։ Սակայն նրանց բոլորի մեջ ամենաընդունակը, ամենաեռանդունը և ամենաբեղմնավորը եղել է վարպետ Պողոսը։ Նա ժամանակին ճանաչված է եղել որպես լավ փորագրիչ, տառեր ձուլող, տառերի նոր ձևեր հորինող, թռչնակերպ և կենդանակերպ գողտրիկ գլխատառեր պատրաստող և այլն։ Նրա տպարանում տպագրվել են հայերեն, թյուրքերեն և այլ լեզուներով շատ գրքեր։ Վարպետ Պողոսի ձեռքի տակ աշակերտել, սովորել և վարպետ են դարձել մի շարք մարդիկ։ Նա շատ կարևոր ծառայություն է մատուցել ոչ միայն հայ

---

[1] Չնայած պայմանագրում նշված է, թե այդ տպարանը նոր է հիմնվում, բայց հավաստի աղբյուրները վկայում են, որ այն հիմնված է եղել 1709 թ., սակայն 1722 թվականից սկսած մատնված է եղել անգործության։ Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ վրացական առաջին տպարանը հիմնվել է 1629 թվականին՝ Հռոմում, հաջորդը՝ 1705 թվականին՝ Մոսկվայում, ապա 1709 թվականին՝ Թբիլիսիում, իսկ 1737—1744 թվականներին՝ Մոսկվայում և Պետերբուրգում։